# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*19 ՄԱՐՏԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 30

## ՅՈՒՐԻ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆԱԾ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃՈՒՂԻ 47 ՇԵՆՔԻ 4-ՐԴ ՄՈՒՏՔԻ 5-ՐԴ ՀԱՐԿԻ 1 ՍԵՆՅԱԿԱՆՈՑ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հանգուցյալ Յուրի Մնացականի Մնացականյանին պատկանած Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 47բնակ. շենքի 4-րդ մուտքի 5-րդ հարկի 1 սենյականոց բնակարանը հասցեավորել որպես Վայք համայնք, ք. Վայք, Ջերմուկի խճ. 47 բնակարան 40:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*19 ՄԱՐՏԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ Ու Մ N 31

## <<ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝

1. <<ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից միավորած Վայք համայնքի Զեդեա գյուղում գտնվող 5-րդ փողոց 6/սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 31102018-10-0008/ և 5-րդ փողոց 7/սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 18032020-10-0007/ հասցեների նոր առաջացած հողատարածքը հասցեավորել որպես Վայք համայնք, գ. Զեդեա, 5-րդ փողոց թիվ 6 հողամաս:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*17 ԱՊՐԻԼԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 32

### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի «ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 114 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Վայք համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ղեկավարի 2017թ. դեկտեմբերի 27-ի <<Վայք համայնքում աղետների ռիսկի կառավարման համակարգի ստեղծման մասին>> թիվ 114 որոշումը
2. Հաստատել Վայք համայնքի.
   2.1 խորհրդի նոր կազմը ՝ համաձայն հավելված N 1-ի
   2.2 Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի
3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

Հավելված N 1
Վայք համայնքի ղեկավարի
«17»ապրիլի 2020 թ-ի N 32 որոշման

**ԿԱԶՄ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

**Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝**

1. խորհրդի ղեկավար՝ Թարո Ավետյան /համայնքի ղեկավար/,
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Վիգեն Գասպարյան /համայնքի ղեկավարի տեղակալ/,
3. խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Գագիկ Մուշկամբարյան /աշխատակազմի քարտուղար/,
4. խորհրդի անդամներ՝

1) ավագանի Արարատյան Արարատ ,
2) ավագանի Համլետ Գեղամյան ,
3) բնակավայրի վարչական ղեկավարներ՝

ա. Փոռ բնակավայրի վարչական ղեկավար՝ Լազր Ենոքյան,
բ. Ազատեկ բնակավայրի վարչական ղեկավար՝ Սիրակ Հովսեփյան,
գ. Զեդեա բնակավայրի վարչական ղեկավար՝ Վահրամ Գյուլամիրյան,
դ. Արին բնակավայրի վարչական ղեկավար՝ Սենիկ Հարությունյան,

4) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Վարդան Գրիգորյան /Վայքի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար/(համաձայնությամբ),
բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Հրազդան Կոստանյան /Ոստիկանության Վայքի բաժնի պետի տեղակալ(համաձայնությամբ),
գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Վահե Գրիգորյան /«Վայք համայնքի բարեկարգում» ՍՊԸ-ի գլխավոր մասնագետ/(համաձայնությամբ),
դ. կապի պատասխանատու՝ Հովսեփ Հովսեփյան/«_ԱրմենՏել» ՓԲԸ-ի Վայքի ղեկավար կամ տեղամասի ճարտարագետ /(համաձայնությամբ),
ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Ռոբերտ Ասլանյան /«Վայքի բուժական միավորում» ՓԲԸ-ի տնօրեն/(համաձայնությամբ),
զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Արամ Արամյան բաժնի պետ/,
է. էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Արմեն Հարությունյան/«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-Ի <<Արաքս>> մասնաճյուղ, Վայք տեղամասի գլխավոր ինժեներ/(համաձայնությամբ),
ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Գնել Սարգսյան <<Վայքի ՃՇՇ>> ՓԲԸ գլխավոր ինժեներ/,
թ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Ռոման Մկրտչյան/համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ/,
ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Սևակ Ղազարյան /համայնքապետարանի գլխավոր մասնագետ բաժնի պետ/:

Հավելված N 2
Վայք համայնքի ղեկավարի
«17»ապրիլի 2020 թ-ի N 32 որոշման

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

**1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը.**

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Վայք համայնքի աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Վայքի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

**1. ԱՌԿ խորհրդի ԱՌԿ նախապատրաստական գործառույթներն են՝**

1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) Աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի միջոցառումների ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացումը՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) վարժանքների կազմակերպումը և անցկացումը

14) աղետների ռիսկի կառավարման պլանի ճշգրտումը:

**2. ԱՌԿ խորհրդի ԱԻ արձագանքման գործառույթներն են՝**

1) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխման ապահովումը,

8) ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,

9) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,

10) առաջին օգնության իրականացման ապահովումը,

11) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,

12) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

13) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,

14) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

15) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպման, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցման ապահովումը,

16) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպման ապահովումը,

17) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերման, գրանցման և համապատասխան սոցիալական ծառայություններ ուղղորդման ապահովումը,

18) ընտանիքներին երեխաների վերամիավորման կազմակերպման ապահովումը,

19) աղետից հետո ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատման կազմակերպման ապահովումը,

20) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*17 ԱՊՐԻԼԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 33

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վայք համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Հաստատել 2020 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն 1-ից 6-րդ հավելվածների:
2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանի հավելված N 6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:
3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*20 ԱՊՐԻԼԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 34

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ 2020Թ. ԱՊՐԻԼԻ 20-Ի ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի ապրիլի 20-ի արձանագրությունը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել 20.04.2020թ.-ին կայացած աճուրդի արդյունքները.

| Հ/հ | Հողամասի գործառնական նշանակությունը | Հողամասի հասցեն | Հողամասի մակերեսը | Գնորդի անուն, ազգանուն, հայրանուն | Վճարումների կարգը | Վաճառքի գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | Վայք համայնք, գյուղ Արին, | 3,0 հա | Դավիթ Գալստյան | Բանկով | 1150000 |
| 2 | Բնակելի կառուցապատում | Վայք համայնք, ք. Վայք, Ազատությա | 0,0088 հա | Գայանե Ասլանյան | Բանկով | 90000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ն 1/8 | | | | |
| 3 | Հասարակական կառուցապատում | Վայք համայնք, ք. Վայք, Ջերմուկի խճ. 8/10 | 0,004 հա | Նատալյա Գրիգորյան | Բանկով | 46750 |
| 4 | Գյուղատնտեսական | Վայք համայնք, գ. Արին | 1,60897հա 1,31744հա | Զավեն Սայադյան | Բանկով | 720000 |

| Հ/հ | Անշարժ գույք | Հասցեն | մակերեսը | Գնորդի անուն,ազգանուն | Վճարումների կարգը | Վաճառքի գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Շինություն | ք. Վայք, Ջերմուկի խճ. 1-ին փակուղի, թիվ 3 | 80,64քմ | <<Ազատեկ ՀԷԿ>> | Բանկով | 320000 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*20 ԱՊՐԻԼԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 35

### ԴԱՎԻԹ ԱՎԵՏԻՍԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2001թ.-ի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ գլխի դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի , Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, հիմք ընդունելով Վայք համայնքի ավագանու 28.02.2020թ.-ի թիվ 22 որոշումը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Արին գյուղում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 3,0 հա 10-009-0118-0048 ծածկագրով արոտավայրը հատկացնել աճուրդում հաղթող ճանաչված Դավիթ Ավետիսի Գալստյանին՝ 1150000 դրամ առաջարկված առավելագույն արժեքով:
2. Աճուրդում հաղթող ճանաչված քաղաքացու հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր՝ գնման գինը վճարելուց հետո, չվճարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*20 ԱՊՐԻԼԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 36

## ԳԱՅԱՆԵ ՀՈՒՍԻԿԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2001թ.-ի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ գլխի դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի , Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, հիմք ընդունելով Վայք համայնքի ավագանու 31.01.2020թ.-ի թիվ 5 որոշումը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Ք. Վայք, Ազատության փողոց 1/8 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, 0,0088 հա 10-003-0003-0111 ծածկագրով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը հատկացնել աճուրդում հաղթող ճանաչված Գայանե Հուսիկի Ասլանյանին՝ 90000 դրամ առաջարկված առավելագույն արժեքով:
2. Աճուրդում հաղթող ճանաչված քաղաքացու հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր՝ գնման գինը վճարելուց հետո, չվճարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*20 ԱՊՐԻԼԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 37

## ՆԱՏԱԼՅԱ ԱՊԱՎԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2001թ.-ի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ գլխի դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի , Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, հիմք ընդունելով Վայք համայնքի ավագանու 31.01.2020թ.-ի թիվ 5 որոշումը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Ք. Վայք, Ջերմուկի խճ. 8/10 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, 0,004 հա 10-003-0004-0342 ծածկագրով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը հատկացնել աճուրդում հաղթող ճանաչված Նատալյա Ապավենի Գրիգորյանին՝ 46750 դրամ առաջարկված առավելագույն արժեքով:
2. Աճուրդում հաղթող ճանաչված քաղաքացու հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր՝ գնման գինը վճարելուց հետո, չվճարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*20 ԱՊՐԻԼԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 38

## ՋԱՎԵՆ ՎԱԶԳԵՆԻ ՍԱՅԱԴՅԱՆԻՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2001թ.-ի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ գլխի դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի , Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, հիմք ընդունելով Վայք համայնքի ավագանու 18.06.2018թ.-ի թիվ 34 որոշումը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Արինի գյուղում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 1,60897 հա 10-009-0118-0046 ծածկագրով արոտավայրը և 1,31744 հա 10-009-0115-0108 ծածկագրով այլ հողատարածքը հատկացնել աճուրդում հաղթող ճանաչված Ջավեն Վազգենի Սայադյանին՝ 720000 դրամ առաջարկված առավելագույն արժեքով:

2. Աճուրդում հաղթող ճանաչված քաղաքացու հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր՝ գնման գինը վճարելուց հետո, չվճարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*20 ԱՊՐԻԼԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 39

## ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ք. ՎԱՅՔ, ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃ. 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ <<ԱԶԱՏԵԿ ՀԷԿ>> ՓԲԸ-ԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Վայք քաղաքային համայնքի ավագանու 31.01.2020թ. թիվ 6 որոշումը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Վայքի համայնքապետարանին սեփականության իրավունքով պատկանող Ք. Վայք, Ջերմուկի խճ. 1-ին փակուղի 3 հասցեում գտնվող 80,64քմ շինությունը՝ զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված 0,02184 հա հողամասով, հատկացնել աճուրդում հաղթող ճանաչված <<Ազատեկ ՀԷԿ>> ՓԲԸ-ին՝ 320000/երեք հարյուր քսան հազար/ դրամ առավելագույն արժեքով:
2. Հանձնարարել հաշվապահին՝ կատարելու գույքի հանձնման աշխատանքները և հաշվառման մատյանից հանելու վերոհիշյալ գույքը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*29 ԱՊՐԻԼԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 40

### <<ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ>> ՓԲԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ <<ՄՈԶ>> ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՏՆԱԿԸ՝ ԶԲԱՂԵՑՐԱԾ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՈՎ, ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. <<Հայռուսգազարդ>> ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 2170692/ օպերատորի տնակը՝ զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված 0,02 հա հողամասով, հասցեավորել որպես Վայք համայնք, ք. Վայք, Սիամանթոյի փողոց. թիվ 21:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*29 ԱՊՐԻԼԻ 2020թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 41

## <<ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ>> ՓԲԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ <<ՄՈՉ>> ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱԶԱԲԱՇԽԻՉ ԿԱՅԱՆԻ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. <<Հայռուսգազարդ>> ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 2170693/ գազաբաշխիչ կայանի և զբաղեցրած 0,11հա հողամասը՝ հասցեավորել որպես Վայք համայնք, ք. Վայք, Սիամանթոյի փողոց. թիվ 27:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*11 ՄԱՅԻՍԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 42

## ՔԱՂԱՔԱՑԻ ՀԵՐՈՍ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃ. 36 ԲՆԱԿ. ՇԵՆՔԻ ԹԻՎ 1ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Քաղաքացի Հերոս Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 1042260/ Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 36 բնակ. շենքի թիվ 1ա հասցեում գտնվող բնակարանը վերահասցեավորել որպես՝ Վայք համայնք, քաղաք Վայք, Ջերմուկի խճուղի 36 շենք, բնակարան թիվ 1/1:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*13 ՄԱՅԻՍԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 43

## <<ԱԶԱՏԵԿ ՀԷԿ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃ. 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՁԿՆԱԲՈՒԾԱՐԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետին, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ կետին համապատասխան և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 1-ին փակուղի թիվ 4 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա /որից 184,5 քմ ջրահավաքման ամբարը 0,043435 հա հողամասով գրանցված է որպես համայնքային սեփականություն(սեփ. վկայական թիվ 2619884) դատարանի վճռի հիման վրա, իսկ 0,001575 հա փոխանցվել է ՀՀ կառավարության որոշմամբ, / <<Ազատեկ ՀԷԿ>> փակ բաժնետիրական ընկերության կողմից կառուցված 227,42 քմ մակերեսով ձկնաբուծարանը, որի փաստացի զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողամասի մակերեսը կազմում է 0,04501 հա, համարել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինական կառույցի հասցեն թողնել անփոփոխ՝ Վայք համայնք, ք. Վայք, Ջերմուկի խճ. 1-ին փակուղի թիվ 4:
3. Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով

սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեին՝ վերագրանցում կատարելու խնդրանքով:
5. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված 227,42 քմ մակերեսով կառույցը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0,04501 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով, օրինականացման համար սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ <<Ազատեկ ՀԷԿ>> փակ բաժնետիրական ընկերությանը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

_______________ին Հողհատկացման հիմք _______________

Վայոց Ձոր | Վայք
Մարզ | Համայնք

ՄԱՍՇՏԱԲ 1:500




| ՀՈՂԱՄԱՍԻ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Մակերեսը (հա) | 0.04501 | Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատները X | Կոորդինատները Y | Գծային չափեր | Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանուն (անվանումը) |
| Ծածկագիրը | 10-003-0037-0031 | | | | | |
| Նպատակային նշանակությունը | Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | | | | | |
| Գործառնական նշանակությունը | Արդյունաբերական օբյեկտների | | | | | |
| Հողամասը ծանրաբեռնված է | | | | | | |

| ՇԻՆՈՒԹՅԱՆ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Համարը ըստ հողամասի հատակագծի | Գործառնական նշանակությունը | Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատները X | Կոորդինատները Y | Գծային չափեր |
| | | | | | |

Կատարող՝ Անդրանիկ Ներսիսյան « 18 » սեպտեմբեր 2019 թ.
(անուն, ազգանուն) (ամիս, ամսաթիվ)

Որակավորման վկայական № 0141, տրված « 29 » մարտ 2012 թ.

Կ.Տ.

Իրավաբանական անձ № 01Ա236352 Ա/Ձ Անդրանիկ Ներսիսյան _______ (ստորագրություն)

| [illegible] | | | | | | | [illegible] | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատները | | Գծային չափերը | Սահմանակից հողամասերը (հողատարածքները) անուն, ազգանուն (անվանումը) | Համարը ըստ հողամասի հատակագծի | [illegible] | Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատները | | Գծային չափերը |
| | X | Y | | | | | | X | Y | |
| 1 | 8538254 8899 | 4395905 8754 | 14.60 | Համայնքի հող | 1 | [illegible] | 1 | 8538261 2539 | 4395906 4672 | 4 30 |
| 2 | 8538253 0096 | 4395920 3538 | 7 40 | --..-- | | | 2 | 8538259 9267 | 4395910 5558 | 2 97 |
| 3 | 8538260 3469 | 4395921 3067 | 16.96 | --..-- | | | 3 | 8538260 1717 | 4395913 5188 | 1 26 |
| 4 | 8538277 1641 | 4395923 4908 | 2.64 | --..-- | | | 4 | 8538258 9667 | 4395913 8888 | 7 55 |
| 5 | 8538279 7848 | 4395923 8311 | 16 71 | -- -- | | | 5 | 8538260 3469 | 4395921 3067 | 16 96 |
| 6 | 8538287 2503 | 4395908 8845 | 11 16 | --..-- | | | 6 | 8538277 1637 | 4395923 4882 | 5 21 |
| 7 | 8538276 1420 | 4395907 8516 | 14.95 | --..-- | | | 7 | 8538276 3876 | 4395918 3404 | 4 87 |
| 8 | 8538261 2539 | 4395906 4672 | 6.39 | --..-- | | | 8 | 8538275 6799 | 4395913 5270 | 2 37 |
| 1 | 8538254 8899 | 4395905 8754 | | | | | 9 | 8538275 3347 | 4395911 1788 | 0 88 |
| | | | | | | | 10 | 8538276 2077 | 4395911 0838 | 3 23 |
| | | | | | | | 11 | 8538276 1420 | 4395907 8516 | 14 95 |
| | | | | | | | 1 | 8538261 2539 | 4395906 4672 | |

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Անուն, ազգանուն (անվանում)

Մարզ Վայոց Ձոր համայնք Վայք հասցե

Մասշտաբ 1:200




1 Ձկնաբուծարան
H 1.50
D=0.20

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/Հ | Շինության նշանակությունը | Գործառական նշանակությունը | Հարկ | Հարկայնությունը | Մակերեսները (քմ) | | Բարձրությունը (մ) | Ծավալը (խմ) | Կառուցման ավարտման տարեթիվը | Տանիքի նյութը | | | | Ավարտվածության աստիճանը | | | | Պատերի շինանյութի անվանումը | Միջհարկային ծածկի նյութը | | Արտաքին հարդարումն ըստ կողմերի | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Օրինական | Ինքնակամ | | | | թիթեղ | շիֆեր | կղմինդր | [illegible] | ավարտված | մինչև 50% | 50-80% | 80% և ավելի | | փայտ | երկաթբետոն | Հասարակ | քարերեսպատված | ծեփածո | սվաղված | գունավոր ներկած |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 1 | Արտադրական | Ջկնաբուծարան | | | 227.42 | | 1.50 | 341.13 | 2010 | | | | | | | | V | բետոն | | | | | | | 4 |

| Շինության ընդհանուր մակերեսը (քմ) | այդ թվում՝ Օրինական կառուցված (քմ) | Ինքնակամ կառուցված (քմ) |
|---|---|---|
| 27 | 28 | 29 |
| 227.42 | 227.42 | 0.00 |

Կատարող՝ Անդրանիկ Ներսիսյան « 18 » սեպտեմբեր 2019 թ.
(անուն, ազգանուն) (ամիս, ամսաթիվ)

Որակավորման վկայական № 0141, տրված « 29 » մարտ 2012 թ.

Իրավաբանական անձ № 01Ա236352 Ա/Ձ Անդրանիկ Ներսիսյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

# Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N 0141

## ԱՆԴՐԱՆԻԿ ՆՎԵՐԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության

գործունեության մասնագիտական որակավորման հանձնաժողովի

26 մարտի 2012թ. եզրակացությամբ՝ արձանագրություն N 1

տրվել է

## ՔԱՐՏԵԶԱԳՐՈՂԻ, ԳԵՈԴԵԶԻՍՏԻ, ՉԱՓԱԳՐՈՂԻ (ՀԱՇՎԱՌՈՂԻ), ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԻ

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

ՀՀ կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի նախագահ

Ե.ՋԱՆՈՒՄՅԱՆ

«29» մարտի 2012թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*13 ՄԱՅԻՍԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 44

## <<ԱԶԱՏԵԿ ՀԷԿ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետին, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետին համապատասխան և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 1/2 հասցեում գտնվող <<Ազատեկ ՀԷԿ>> փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող /վկայական թիվ 1977630/ հողամասում ինքնակամ կառուցված 1044,56 քմ մակերեսով շինությունները համարել օրինական:
2. Ընդունել ի գիտություն, որ կառույցները պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցները քանդման ենթակա չեն, կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների համար սահմանված 1722600 /1044,56X1650 դրամ/ գումարը ենթակա է վճարման՝ սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում: Նշված գումարը չվճարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**